

խառնեն եւ զայս՝ թէ պահոց օրերուն հրաժարելով մսէ, ձկէ, հաւկթէ, պանրէ, կարագէ, կաթէ եւ ձիթէ, կը գոհանան հացով, բանջարով ու գինւով (նոյն, 364): Բոլոր այս նիւթերէն զգուշացողներ կային, այո, բայց մի եւ նոյն ժամանակ շատերն ալ աւելի մեղմ կը պահէին, խորշելով մսէ, հաւկթէ ու կթեղենէ միայն, ինչպէս կը վկայէ Ստոյ 1342ին ժողովը (նոյն, 387): Ասոր համար վերոյիշեալ Այրիվանեցին հազիւ քահանայից կը համարձակէր արգելուլ գինին ու ձէթը. ուսկից կը հետեւի՝ որ աշխարհականք կը շարունակէին ուտել զազոնք:

Բ. Ծումը¹ սովորական պահոց մէջ բուրովին ազատ էր, եւ առանց զոք բռնադատելու՝ կը գործադրուէր ի հնուց կամաւորապէս, որով եւ անհաւասար կերպով: Անշուշտ առնուած էր ս. Գրքէն, ուր կը յիշուին ծոմեր՝ միօրեայ (Բ թագ. Ա, 12), երեքօրեայ (Եսթ. Գ, 15) եւ եօթնօրեայ (Ա թագ. ԼԱ, 13): Բայտ այսմ Մանդակունին կ'աւանդէ՝ թէ Հայերէն «ոմանք միօրե, ոմանք երկպահք, ոմանք երեքօրեայ, եւ ոմանք եօթնօրոյ պարկեշ-

1. Եբր. ծոմ կամ ստոր. ծումա հոմանշէն (Հիւրշ-306), եւ Ե գարուն արդէն մեր մէջ գործածական էր. «ծոմ կարգային» (Ա Մակ. Գ, 47):